

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- ✓ 2007 թ. հուլիսի 3-6-ը ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Գևորգյանը մասնակցել է ք. Կիևում (Ուկրաինա) կայացած «Պետական վիճակագրության հիմնախնդիրները տնտեսական գլոբալիզացիայի պայմաններում» թեմայով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2007 թ. հուլիսի 5-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը մասնակցել է ք. Լիսաբոնում (Պորտուգալիա) կայացած «Տվյալների հավաքագրումը՝ որպես կանանց հանդեպ, այդ թվում նաև ընտանիքում կատարվող բռնությունների դեմ արդյունավետ քաղաքականության մշակման նախապայման» թեմայով սեմինարին,
- ✓ 2007 թ. հուլիսի 10-ից սեպտեմբերի 15-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի Կոտայքի մարզային գործակալության ամփոփ և տարածքային վիճակագրության բաժնի պետ Մ. Ստեփանյանը մասնակցում է ք. Չիբայում (Ճապոնիա) կայանալիք «Պաշտոնական տնտեսական վիճակագրության հավաքագրումն ու վերլուծությունը Կենտրոնական Ասիայի երկրներում» թեմայով վերապատրաստման դասընթացին,
- ✓ 2007 թ. հուլիսի 17-ից սեպտեմբերի 22-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ֆինանսների վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Զ. Պողոսյանը մասնակցում է ք. Չիբայում (Ճապոնիա) կայանալիք «Պաշտոնական վիճակագրության վերլուծությունը, մեկնաբանությունը և տարածումը /տնտեսական վիճակագրություն/» թեմայով վերապատրաստման դասընթացին,
- ✓ 2007 թ. օգոստոսի 6-10-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի գլխավոր մասնագետ Ա. Գյուլբենկյանը մասնակցել է ք. Նյու Դելիում (Հնդկաստան) կայացած «Գեոդերային վիճակագրության արտադրություն» թեմայով աշխատանքային հանդիպմանը: